

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°1

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2018-2019 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

19 սեպտեմբերի 2018թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 18-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սաղյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի 2018-2019 ուսումնական տարվա աշխատանքնային պլանի նախագծի քննարկում և հաստատում:
Ձեկուցող՝ Ա. Դադայան
2. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ք.գ.թ. Հայարփի Սիմոնյանի դոցենտի կոչում ստանալու գործընթացը սկսելու հարցը:
Ձեկուցող՝ Ա. Սաղյան
3. Նաիրա Կամոյի Շաբոյանի՝ ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի հայցորդ ձևակերպման, ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ, «Դրախտածառը (Cotinus coggygria Scop.) բուսական ծագման կենսաբանորեն ակտիվ ֆենոլային միացությունների ստացման հեռանկարային սկզբնաղբյուր» վերնագրով թեկնածուականատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:
Ձեկուցող՝ Ա. Սաղյան
4. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ, կ.գ.թ. դոցենտ Անահիտ Հովհաննիսյանի կողմից ներկայացված «Փափուկ դեղաձևեր» վերնագրով ուսումնական ձեռնարկի արտաքին գրախոս նշանակելու հարցը: **Ձեկուցող՝ Ա. Սաղյան**
5. Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներից անվանական կրթաթոշակ նշանակելու հարցը: **Ձեկուցող՝ Ա. Վարդապետյան**
6. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

- 1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի 2018-2019 ուս. տարվա աշխատանքային պլանի նախագծի քննարկում և հաստատում:**

Լսեցին՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար **ք.գ.թ. Ա. Դադայանին**, ով ներկայացրեց ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի 2018-2019 ուս. տարվա աշխատանքային պլանի նախագիծը: Նա նշեց, որ գիտական խորհրդի անդամները նախապես ծանոթացել են աշխատանքային պլանի նախագծին՝ դիտողություններ և առաջարկություններ անելու համար: **Ա. Դադայանը** տեղեկացրեց, որ եղել է մեկ դիտողություն ուսումնական հարցերի գծով փոխտնօրեն **Ս. Վարդապետյանի** կողմից: Մասնավորապես, նա նշել է, որ 2018/2019 ուս. տարվանից անց են կացվելու ոչ թե պետական քննություններ, այլ՝ ամփոփիչ ատեստավորումներ: **Ա. Դադայանը** հավելեց, որ դիտողությունը հաշվի է առնվել և գիտխորհրդի աշխատանքային պլանի նախագծում կատարվել է համապատասխան ուղղում: Ելույթ ունեցավ գիտխորհրդի նախագահ **Ա. Սադյանը**, ով նշեց, որ եթե այլ դիտողություններ և առաջարկություններ չկան՝ հաստատել գիտական խորհրդի 2018-2019 ուս. տարվա աշխատանքային պլանը:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել գիտական խորհրդի 2018-2019 ուս. տարվա աշխատանքային պլանը:

- 2. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ք.գ.թ. Հայարփի Սիմոնյանի դոցենտի կոչում ստանալու գործընթացը սկսելու հարցը:**

Ելույթ ունեցան՝ Գիտական խորհրդի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Ա. Սադյանը** և մրցութային հանձնաժողովի նախագահ, **ք.գ.թ. Տ. Սարգսյանը**: Ելույթ ունեցողները նշեցին, որ դոցենտի կոչման հավակնորդ **Հ.Մ. Սիմոնյանի** գիտամանկավարժական գործունեությունը, գիտական աստիճանը և աշխատանքային ստաժը բավարարում են ՀՀ ԲՈՀ-ի կողմից ներկայացվող պահանջներին: **Հ.Մ. Սիմոնյանը** դասախոսություններ է կարդում և գործնական աշխատանքներ է վարում «Կենսօրգանական քիմիա» և «Հետազոտության պլանավորում» առարկաներից: Նա ղեկավարում է կուրսային և դիպլոմային աշխատանքներ, մագիստրոսական թեզեր: **Հ. Սիմոնյանը** հեղինակ է 21 գիտական հոդվածների, որոնցից 6-ը՝ բարձր ազդեցության գործակից ունեցող գիտական հանդեսներում և 26 գիտաժողովների զեկուցման թեզիսների: Վերջին երեք տարում հրապարակել է 8 գիտական հոդված, 11 զեկուցման թեզիս և 1 ուսումնամեթոդական աշխատանք:

Հ.Մ. Սիմոնյանի մասին կարծիք հայտնեցին կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ, **բ.գ.դ. Ռ. Հովհաննեսյանը** և **ք.գ.թ. Ս. Վարդապետյանը**, ովքեր նշեցին, որ

2. Միմոնյանը լավ մանկավարժ է, բանիմաց գիտնական և արժանի է կրելու դոցենտի կոչում:

Որոշեցին՝ Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. նախագահ՝ Բ.Գ.Պ. Ռ. Հովհաննեսյան, անդամներ՝ ք.գ.թ. Ս. Վաղապետյան, ք.գ.թ. Ս. Ափոյան և Ս. Ստեփանյան:

Ընտրություններից հետո գիտական խորհուրդը լսեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, համաձայն որի, փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել էին խորհրդի 18 անդամներ: Հ.Ս. Միմոնյանի դոցենտի կոչում շնորհելուն կողմ էր քվեարկել 17 անդամ, դեմ՝ 0, անվավեր էր՝ 1 քվեաթերթ:

Խորհուրդը բաց քվեարկությամբ հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և երաշխավորեց Հ.Ս. Միմոնյանին՝ դոցենտի (Բ.00.10- «Կենսօրգանական քիմիա») կոչում ստանալու գործընթացը սկսելու համար:

3. **Նաիրա Կամոյի Շաբոյանի՝ ֆարմաքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի հայցորդ ձևակերպման, ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ «Դրախտածառը (Cotinus coggygria Scop.) բուսական ծագման կենսաբանորեն ակտիվ ֆենոլային միացությունների ստացման հեռանկարային սկզբնաղբյուր» վերնագրով թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:**

Լսեցին՝ Գիտական խորհրդի նախագահ Ա. Սադյանին, ով գիտխորհրդի անդամների տեղեկացրեց, որ գիտական խորհրդին է դիմել ԵՊԲՀ շրջանավարտ Նաիրա Շաբոյանը՝ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմաքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի հայցորդ ձևակերպվելու համար: Վերջինիս կողմից ներկայացվել են ՀՀ ԲՈԿ-ի կողմից պահանջվող բոլոր փաստաթղթերը և այժմ ըստ ընթացակարգի պետք է հաստատվի ատենախոսական աշխատանքի թեման և գիտական ղեկավարին: Քանի որ Ն. Շաբոյանը բացակայում է երկրից, Ա. Սադյանը ձայնը տվեց Ն. Շաբոյանի անմիջական ղեկավար, գիտխորհրդի անդամ, դ.գ.դ. Նաիրա Զիչոյանին:

Ն. Զիչոյանը ներկայացրեց Նաիրա Շաբոյանի ատենախոսական աշխատանքի շրջանակներում նախատեսվող հետազոտությունները՝ շեշտելով, որ դրանք ուղղված կլինեն սակավ ուսումնասիրված դրախտածառի (Cotinus coggygria Scop.) բուսական ծագման կենսաբանորեն ակտիվ ֆենոլային միացությունների ստացմանը:

Ն. Զիչոյանը նշեց, որ ներկայացվող թեմայի շրջանակներում Նաիրա Շաբոյանի կողմից արդեն իսկ կատարվել են որոշ ուսումնասիրություններ, տպագրվել են հոդվածներ(այդ թվում բարձր ազդեցության գործակից ունեցող գիտական հանդեսներում) և զեկուցումների թեզիսներ: Ելույթ ունեցան նաև ակադեմիկոս Ա. Սադյանը, Բ.Գ.Պ. Ռ. Հովհաննեսյանը, ովքեր նշեցին, որ նախատեսված աշխատանքը արդիական է մեր հանրապետության համար և ուսումնասիրությունների արդյունքները կարող են հիմք ծառայել նոր, էկոլոգիապես մաքուր բուսական ծագման դեղապատրաստուկների ստացման

համար: Ելույթ ունեցողներն առաջարկեցին Ն. Շաբոյանի ատենախոսական աշխատանքի ղեկավար հաստատել դ.գ.դ. Ն. Զիչոյանին, ով նաև Ֆարմացիայի ինստիտուտում դասավանդում է ֆարմակագնոզիա առարկան:

Որոշեցին՝

1. Ձևակերպել Նաիրա Կամոյի Շաբոյանին որպես Ֆարմացիայի ինստիտուտի ֆարմաքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի հայցորդ:
2. Հաստատել ատենախոսության թեման՝ «Դրախտածառը (Cotinus coggygia Scop.) բուսական ծագման կենսաբանորեն ակտիվ ֆենոլային միացությունների ստացման հեռանկարային սկզբնաղբյուր» վերնագրով և ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ:
3. Նաիրա Շաբոյանի ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավար հաստատել դ.գ.դ. Նաիրա Բաբկենի Զիչոյանին:
4. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ, կ.գ.թ. դոցենտ Անահիտ Հովհաննիսյանի կողմից ներկայացված «Փափուկ դեղաձևեր» վերնագրով ուսումնական ձեռնարկի արտաքին գրախոս նշանակելու հարցը:

Լսեցին՝

Գիտխորհրդի նախագահ Ա. Սաղյանին, ով տեղեկացրեց, որ Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման ամբիոնի վարիչ, կ.գ.թ. դոցենտ Անահիտ Հովհաննիսյանի կողմից գիտական խորհուրդ է ներկայացվել «Փափուկ դեղաձևեր» վերնագրով ուսումնամեթոդական աշխատանքը՝ արտաքին գրախոսման համար: Աշխատանքը քննարկվել է ամբիոնում և մեթոդական խորհրդի նիստում (նիստ №4, առ 30. 08. 2018թ.) և ստացել դրական արձագանք: Աշխատանքի վերաբերյալ կարծիք է ներկայացրել նույն ամբիոնի դոցենտ, ք.գ.թ. Մարինա Շեյրանյանը (կարծիքը կցվում է):

Մ. Շեյրանյանը նշեց, որ աշխատանքն արժանի է բարձր գնահատականի, ուսանելի է, ունի կիրառական նշանակություն և օգտակար կլինի ուսանողների համար՝ հմտորեն կատարելու դեղերի դեղատնային տեխնոլոգիա առարկայի փորձնական աշխատանքները:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի անդամներ Ռ. Հովհաննեսյանը, Կ. Պետրոսյանը, Ս. Ափոյանը, ովքեր կարևորեցին ուսումնամեթոդական աշխատանքի անհրաժեշտությունը, առաջարկեցին շարունակել դրա տպագրության գործընթացը: Ելույթ ունեցողներն առաջարկեցին աշխատանքն արտաքին արտաքին գրախոսման ուղարկել ԵՊԲՀ Դեղագիտական ֆակուլտետ:

Որոշեցին՝ (միաձայն) Ա. Հովհաննիսյանի կողմից ներկայացված ուսումնամեթոդական աշխատանքը արտաքին գրախոսման ուղարկել ԵՊԲՀ դեղագիտական ֆակուլտետ՝ դեղագործության կառավարման ամբիոն:

5. Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներից անվանական կրթաթոշակ նշանակելու հարցը:

Լսեցին՝ Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակը շարունակելու և Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակ տրամադրելու համար մեկ ուսանողի թեկնածության առաջադրման հարցը:

Ելույթ ունեցավ՝ Ֆարմացիայի ինստիտուտի ուսումնական հարցերի գծով փոխտնօրեն ք.գ.թ., դոցենտ Ս. Վարդապետյանը, ով տեղեկացրեց, որ անհրաժեշտ է շարունակել Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակի տրամադրումը և Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակ տրամադրելու համար ներկայացնել մեկ ուսանողի թեկնածություն: Ս. Վարդապետյանը, նշեց, որ Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակ ներկայումս տրամադրվում է «Դեղագիտություն» 4-րդ կուրսի ուսանողուհի Մարգարիտա Հայկի Բաղդասարյանին, ով շարունակում է իր ուսումը բարձր առաջադիմությամբ, ակտիվորեն մասնակցում է ինստիտուտի հասարակական կյանքին: Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակ տրամադրելու համար՝ ԵՊՀ պետական և ավարտական կրթաթոշակներ հատկացնելու կարգի համաձայն, թեկնածու ուսանողը վերջին 4 կիսամյակում պետք է ունենա անընդմեջ գերազանց առաջադիմություն, հասարակական ակտիվություն, լինի սոցիալապես անապահով ընտանիքից: Ս. Վարդապետյանը Նազելի Չարչյանի կրթաթոշակ ստանալու համար առաջարկեց «Դեղագիտություն» 4-րդ կուրսի ուսանողուհի Հասմիկ Արամայիսի Մարգարյանի թեկնածությունը: Ելույթ ունեցան նաև գիտխորհրդի անդամներ Ա. Հովհաննիսյանը, Հ. Սիմոնյանը, Ա. Մկրտչյանը, ովքեր ևս կողմ արտահայտվեցին Հասմիկ Մարգարյանի թեկնածությանը՝ նշելով վերջինիս բարձր առաջադիմությունը և ակտիվությունը:

Որոշեցին՝ (միաձայն)

1. Շարունակել «Դեղագիտություն» 4-րդ կուրսի ուսանողուհի Մարգարիտա Հայկի Բաղդասարյանի՝ Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակը:
2. Ներկայացնել «Դեղագիտություն» 4-րդ կուրսի ուսանողուհի Հասմիկ Արամայիսի Մարգարյանին՝ Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակի:

6. Ընթացիկ հարցեր:

Նիստի ընթացքում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝
տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սաղյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան